ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«14» նոյեմբերի 2014 թվականի N 165 –Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՎԱՐՊԵՏԱՑ ՓՈՂՈՑ № 101 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶԻ ՀՈՒՇԱՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆԻ 95,9 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՆԿՈՒՂԸ <<ԿՈՄՊԱՍՍ>> ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ,ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ (ՄՇՏԱԿԱՆ) ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Վարպետաց փողոց № 101 հասցեում գտնվող Հովհաննես Շիրազի հուշատուն-թանգարանի շենքը Գյումրի համայնքի սեփականություն է (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական № 2017651):

<<Կոմպասս>> գիտահետազոտական,կրթական և խորհրդատվական կենտրոն հասարակական կազմակերպության նախագահը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին (գրությունը քաղաքապետարանում մուտքագրված՝ 2014 թվականի նոյեմբերի 4-ին, N 11048 թվագրմամբ)՝ Հովհաննես Շիրազի հուշատուն-թանգարանի 95, 9 (իննսունհինգ ամբողջ ինը տասնորդական) քառակուսի մետր մակերեսով նկուղը անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով նշված կազմակերպությանը տրամադրելու խնդրանքով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 685-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Վարպետաց փողոց № 101 հասցեում գտնվող Հովհաննես Շիրազի հուշատուն-թանգարանի 95,9 (իննսունհինգ ամբողջ ինը տասնորդական) քառակուսի մետր մակերեսով նկուղը անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով՝ 1 (մեկ) տարի ժամկետով, տրամադրել <<Կոմպասս>> գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն հասարակական կազմակերպությանը:
2. Օրենքով սահմանված կարգով կնքել գույքի անհատույց (մշտական) օգտագործման պայմանագիր:
3. Օրենքով սահմանված կարգով կնքել պատմաճարտարապետական հուշարձան-կառույցի պահպանության պարտավորագիրը:

Կողմ (19)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ(0)**
Ա. Ադամյան _____		
Գ. Ադամյան _____		
Ա. Բաղեյան _____		

Ա. Բաղրամյան _____

Լ.Բարսեղյան _____

Մ. Գաբոյան _____

Ա.Գրիգորյան _____

Վ.Եդիգարյան _____

Գ.Թաթարյան _____

Հ. Խաչատրյան _____

Հ. Կարապետյան _____

Տ.Հովհաննիսյան _____

Վ. Հունանյան _____

Ն. Մեսրոպյան _____

Ռ.Մխիթարյան _____

Է. Մկրտչյան _____

Վ.Շիրինյան _____

Մ. Սահակյան _____

Տ. Փանոսյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«14» նոյեմբերի 2014 թ.